2. 111բ. Մատթէոսի վերջում, ուղղանկիւն երկաթագրով.

Սբ. առաքեալ և աւետարանիչ բանին հաւր, ի քոյդ ապաւինեալ բարեխաւսութի. աղքատս և մեղաւոր աբեղայս Մարգարէս նկարող սորին, որպէս զի ողորմեսցիս ինձ, նաեւ Սահակայ ստացողի, եւ եղբաւր իւրում Իպատոսին, որ կիսաւրեա եղ յաշխարհէս: Ով զմեզ աղաւթիւք յիշէ. ած. զինքն յիշէ:

3. 111բ. Նոյն գրով և թանաքով.

Տր. ած. ողորմեա Սարգսի կուսակրաւն քահանայի և եղբաւր իւրում Շահերոյն և ծնաւղաց իւրեանց ամէն:

4. 173ա. Մեծ երկաթագրով:

Յակոմբ գրիչ յիշեցէք ի տր..:

5. 173բ. Մարկոսի վերջում նոյն Մարգարէի ձեռքով.

Տր. ած. ողորմեա Սահակայ ստացողի եւ ծնաւղաց իւրոց եւ եղբարց, եւ արայ զնոսա հաղորդս քո սրբոցն պսակի: ամէն:

6. 267բ. Ղուկասի վերջում նոյն Մարգարէի ձեռքով.

Յիշեա քս. ած. յողորմութե. քում զՍահակ ստացող սբ. աւետարանիս, եւ զծնաւղսն իւր զեղբայրսն և զքոյրսն զՌեմանոսն և զԿատայն, զԻպատոսն և զԱռաքելն, զՋարհայն և զՀոռոմսիկին, և արայ զնոսա քո սրբոցն դասակից և պսակակից: ամէն:

Նա(եւ) զՎարդն եւ զՅակոմբոսն եւ զծնաւղսն նոցա եւ զամենայն ընդանիսն:

7. 347բ. Յովհաննու վերջում, բուն գրչի ձեռքով, բնագրի գրով և թանաքով:

Փառք բոլորից հաստչի համապատիւ սուրբ երրորդութեանն յաւիտեանս:

Աւրհնութի. որ կարդա
գովութի. որ լսէ
փառք շնորհաւղին
եւ յիշատակ գրչիս:

Տր. ած. ամենակալ նորոգեա իկեանս անձերանալիս զՍահակ ստացաւղ սբ. աւետարանիս ANEH: Ամէն,

Բացի այս իսկական յիշատակարաններից կան և փոքրիկ նկատողութիւններ խորանների գերանների վերայ կամ բնագրի լուսանցքներում, որոնք ձեռագրի ծագման պատմութեան համար նշանակութիւն ունին:

8. 10ա. Խորանի վերին, կապոյտ շրջանակի վերայ սպիտակ գեղագիր երկաթագրով:

...(Տր.) Ած. ողորմեա Առաքել..(ին ամ) էն

Նոյն խորանի սիւներին ձգուած կապոյտ գերանի վերայ, դարձեալ սպիտակագոյն երկաթագրով.

Ած. զթայ ի հոգի Ռեմանոսին ծառայի քո ամէն.

— Նոյն խորանի յատակ կազմող կարմիր գերանի վերայ, ոսկեգոյն գրով.

Հոգի ած. զթայ ի հոգին Իպատոսին ծառա.. :

9. 11ա. Խորանի ճակատի կապոյտ շրջանակի վերայ.

Տր. յս. ողորմեա Սահակա ամէն:

Սիւների գլխի կապոյտ գերանի վերայ.

Ած. իմ յս. ողորմեա մեղուցեալ ոգոյս ամէն:

10. 15ա. Խորանազարդի տակը ներքևի լուսանցքում, փոքր երկաթագրով.

Տր. ած. ողորմեա Մարգարէին, գրչի և նկարչի և Սահակա ստացողի, և ծնաւղաց իւրեանց, ամէն:

11. 175ա. Ղուկասի սկզբնազարդի լուսանցքում խոշոր, կարմրազեղ ծաղկագրերով, (պատկեր 7).

Սահակայ է գիրքս ի փրկութի..:

Սրանք են այն յիշատակարանները, որոնք կապուած են Ձեռագրի ծագման հետ:

## Գ.

Բայց աւելորդ չենք համարում մէջ բերել և այն յիշատակարանները, որոնք Ձեռագրի յետագայ պատմութեանն են վերաբերում.

12. 349ա. Խոշոր բոլորգիր, միջին երկաթագրի մեծութեամբ.

Սիրոյ զաւրութիւն գերազանց է քան զընութիւն և բարեխորհ արանց անյագապէս առ ի բարին զնթացս(?!) որ առ ած., մանաւանդ առ որ ածայինն զաւրանայ գիտութիւն և բաց և սրահաց ունի զհոգոյն